ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 224
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքը (Շողակաթ և Աղբերք բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Ճամբարակ համայնքի (Շողակաթ և Աղբերք բնակավայրերի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ և Աղբերք բնակավայրերի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-074-0102-0008, 05-074-0102-0009, 05-074-0101-0194, 05-074-0101-0195, 05-009-0267-0044, 05-009-0263-0008, 05-009-0263-0007 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.00462 հա, 0.00846 հա, 0.01 հա, 0.01145 հա, 0.01 հա, 0.01 հա, 0.00578 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք, արոտավայր	05-074-0102-0008, 05-074-0102-0009, 05-074-0101-0194, 05-074-0101-0195, 05-009-0267-0044, 05-009-0263-0008, 05-009-0263-0007 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.00462 հա, 0.00846 հա, 0.01 հա, 0.01145 հա, 0.01 հա, 0.01 հա, 0.00578 հա մակերեսներով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պայմանը (կցվում է):

3. Ճամբարակ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Շողակաթ և Աղբերք բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի (Շողակաթ և Աղբերք բնակավայրերի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «31» «մայիսի» 2024 թ.